

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԾԻՔ

Ե.27.01- «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա» մասնագիտությամբ  
տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ներկայացրած

Նարեկ Ավետիքի Ավագյանի «Հնտեղրալ սխեմաներում ծերացման հետևանքների  
մեղմացման արհեստական բանականությամբ միջոցների մշակումը և  
հետազոտումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

### Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից ինտեգրալ սխեմաների (ԻՍ) նախագծման գործընթացում արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը մեծ առաջընթաց է ապահովում ծերացման հետևանքով առաջացող մարտահրավերների լուծման գործում: Ատենախոսությունում ցույց են տրվում ԱԲ կիրառմամբ ԻՍ-երում ծերացման ազդեցությունները հետազոտող և մեղմող տարրեր մեթոդներ: Տեխնոլոգիական գործընթացի զարգացման արդյունքում ծերացման հետևանքով ԻՍ-երի պարամետրերի փոփոխության հետազոտումն իրականացնելիս կարիք է լինում հաշվի առնել նաև ԻՍ-երի սնման դողերում լարման անկումը և ինքնատաքացումը: Նշված երևոյթների և ծերացման համատեղ դիտարկումը կարևոր է, քանի որ դրանք արագացնում են ԻՍ-երի ծերացման գործընթացը՝ հանգեցնելով դրա վաղաժամ խափանման: Նշված մարտահրավերների լուծման ավանդական մեթոդները հաճախ անբավարար են, հատկապես՝ գերմեծ թվային ԻՍ-երի դեպքում, որտեղ միշտարդավոր տրանզիստորներ աշխատում են տասնյակ ԳՀց հաճախություններով, ինչը բերում է սնման դողերում լարման անկման և ինքնատաքացման երևոյթների ավելի մեծ ազդեցությունների: ԱԲ-ն հնարավորություն է տալիս համեմատաբար կարգ ժամանակում կանխագուշակել վերոնշյալ երևոյթների ազդեցությունների դիտարկմամբ ԻՍ-երի պարամետրերի փոփոխությունը:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ Ն.Ա. Ավագյանի «Հնտեղրալ սխեմաներում ծերացման հետևանքների մեղմացման արհեստական բանականությամբ միջոցների մշակումը և հետազոտումը» ատենախոսության թեման արդիական է:

## Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրահանգումից և 5 հավելվածներից: Այն պարունակում է 143 անուն գրականության ցանկ: Ատենախոսության ծավալը կազմում է 112 էջ, իսկ ընդհանուր ծավալը՝ 138 էջ՝ հավելվածները ներառյալ:

Ներածությունը պարունակում է ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան և մեթոդները, աշխատանքի նպատակը և գիտական նորույթը: Ներկայացված են ինչպես պաշտպանությանը ներկայացվող դրույթները, այնպես էլ ստեղծված ծրագրային գործիքի ներդրումը ԻՍ նախագծող առաջատար կազմակերպությունում:

Առաջին գլուխը ներառում է ԻՍ-երում ծերացման հետազոտման կարևորության հիմնավորումը, վերջինիս հանգեցնող պատճառները և դրանց ազդեցությունները տարբեր սիեմաների վրա: Նկարագրված են ծերացման-հետազոտման և մեղմացման գրականությունում հայտնի լուծումները, չ դրանց առավելությունները և թերությունները միմյանց նկատմամբ: Ներկայացված են նաև այն հանգամանքները, որոնց պատճառով ներկայիս լուծումները չեն բավարարում ԻՍ-երի նախագծման ժամանակակից պահանջներին:

Երկրորդ գլուխ առաջարկվել է մեքենայական ուսուցման (ՄՈՒ) ալգորիթմների վրա հիմնված մեթոդ, որը բույլ է տալիս կանխագուշակել թվային ստանդարտ բջիջների և ԻՍ-երի ժամանակային պարամետրերի շեղումները ծերացման և ԻՍ-երի սնման դողերում լարման անկման փոխկախվածության դիտարկմամբ՝ խնայելով կանխագուշակման ժամանակը՝ ստացված տվյալների ճշտության կորստի հաշվին: Առաջարկված մեթոդի սկզբում կատարվում է տվյալների հավաքագրում HSPICE նմանակումների միջոցով: Աշխատանքային պայմաններն ընտրվում են բաց հասանելիության սիեմաների ֆիզիկական նախագծման ավարտից հետո իրականացվող ստատիկ ժամանակային վերլուծության և հզորության վերլուծության արդյունքում: Տվյալների հավաքագրումից հետո կատարվում է ՄՈՒ մոդելի կառուցում: Հաջորդիվ մշակվել է մեկ այլ ՄՈՒ մոդել, որի կիրառմամբ կանխագուշակվում է կրկին թվային ստանդարտ բջիջների և ԻՍ-երի ժամանակային պարամետրերը՝ այս դեպքում հաշվի առնելով նաև ինքնատաքացման ազդեցությունը

Վերոնշյալ երևույթների վրա: Իրականացվել է նշված երկու մոդելների կանխագուշակման տվյալների համեմատություն: Առաջարկվել է թվային ԻՍ-երի ավտոմատացված նախազման գործընթացում կապազերծող կոնդենսատորների տեղակայման նոր մեթոդ, որը նվազեցնում է ծերացման հետևանքների վրա սնման դողերում լարման անկման և ինքնատաքացման ազդեցությունը, սիեմաներում հաջորդական տարրերի մուտքի տեղակայման և պահպանման ժամանակների պաշարների փոքրացման հաշվին:

Երրորդ գլխում ներկայացված է «ML Based Timing Analyzer» (MLBTA) ծրագրային գործիքը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում կիրառել վերը նկարագրված մեթոդները: Ծրագրային գործիքի կիրառմամբ ստանդարտ բջիջների հապաղումների կանխագուշակում իրականացնելուց հետո կատարվում է թվային ԻՍ-երի ժամանակային ուղիների հապաղումների վերահաշվարկ, ինչի արդյունքում ստացվում են ավելի իրատեսական հապաղումներ՝ ծերացման, սնման դողերում լարման անկման և ինքնատաքացման ազդեցությունների միաժամանակյա դիտարկմամբ:

Եզրահանգման մեջ ներկայացված են առաջարկված մեթոդների և մշակված ծրագրային գործիքի արդյունավետության գնահատման արդյունքները: Իսկ կցված հավելվածները պարունակում են ինչպես ծրագրային գործիքի նկարագրության առանձին հատվածներ, այնպես էլ առաջարկվող ՄՈՒ մոդելների ուսուցման տվյալների հավաքագրման համար իրականացվող վերլուծություններից հատվածներ:

**Ատենախոսության գիտական արդյունքների նորույթը և եխմավորման աստիճանը**

Ատենախոսությունում առաջարկված մեթոդների գիտական նորույթները նկարագրված են ստորև.

- Ինտեգրալ սիեմաներում ծերացման և սնման դողերում լարման անկման երևույթների դիտարկմամբ տրամաբանական բջիջների հապաղումների կանխագուշակման համար մեքենայական ուսուցման ալգորիթմների վրա հիմնված եղանակը,
- ծերացման, սնման դողերում լարման անկման և ինքնատաքացման երևույթների փոխներգործության դիտարկմամբ տրամաբանական բջիջների հապաղումների հաշվարկման մեթոդը,

- ինտեգրալ սխեմաներում ծերացման հետևանքների ազդեցության վրա ինքնատաքացման և սնման դողերում լարման անկման ներգործության նվազեցման եղանակը,
- բվային ինտեգրալ սխեմաների տրամաբանական բջիջների վրա՝ ծերացման, սնման դողերում լարման անկման, ինչպես նաև ինքնատաքացման ազդեցությունների համատեղ դիտարկմամբ, մեքենայական ուսուցման ալգորիթմներ կիրառող, հապաղումների կանխագուշակում իրականացնող ծրագրային միջոցը:

Գիտական դրույթների հավաստիությունը՝ Ն.Ա. Ավագյանի կողմից մշակված եղանակները նախատեսված են ինտեգրալ սխեմաներում ծերացման հետևանքների հետազոտման և մեղմացման համար: Տվյալ ինդիքը շատ կարևոր է, քանի որ առկա մեթոդները չեն բավարարում ԻՍ-երի նախագծման ներկայիս պահանջներին՝ պայմանավորված դրանցում տարրերի քանակի մեծացման և այդ պատճառով մեթոդների արագագործության նվազման հետ: Ատենախոսությունում առաջարկված մոտեցումները և վերը նշված հիմնահարցերի լուծումները հրապարակվել են 8 գիտական աշխատանքներում:

Հեղինակի կողմից ստացված արդյունքների կարևորությունը գիտության և արտադրության ոլորտներում. Առաջարկված մեթոդների կիրառման համար ստեղծված MELTA ծրագրային միջոցի կիրառական նշանակությունը հաստատվում է դրա ներդրմամբ «ՄԻՆՈՓՄԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և պարունակում է վերը նշված գլուխներում նկարագրված հիմնահարցերը և առաջարկված մեթոդները:

#### **Աշխատանքում նկատված թերություններն են.**

- Աշխատանքում հետազոտություններն իրականացվել են միայն ՍԱՈՒԴ14 գրադարանի կիրառմամբ:
- Հստակեցված չեն մշակված մեքենայական ուսուցման մոդելի պարամետրերի արժեքները և դրանց լավարկման հնարավորությունները:
- Աշխատանքում առկա չեն հետազոտված սխեմաների նկարագրերը:
- Դիտարկված չեն մեքենայական ուսուցման այլ ալգորիթմների կիրառությունները:

## Եզրակացություն

Ուսումնասիրելով ատենախոսությունն ու սեղմագիրը՝ կարծում եմ.

Ն.Ա. Ավագյանի «Ինտեզրալ սխեմաներում ծերացման հետևանքների մեղմացման արհեստական բանականությամբ միջոցների մշակումը և հետազոտումը» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն աշխատանք է, ունի նշանակալի գործնական արժեք և կատարված է բարձր գիտական մակարդակով: Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, որի բովանդակությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ ԲԿԳԿ-ի կողմից Ե.27.01 «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա» մասնագիտության թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

տ.գ.դ., պրոֆեսոր,

Օ.Հ. Պետրոսյան

Օ.Հ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԱՊՀ-ի գիտական քարտուղարություն

Ծ.Ս. Հովհաննիսյան



"23" 08 2024 թ.